ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

«ՇՀԾՁԲ-15/9-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 21.12.2016թ. ժամը 11-00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Մկրտչյանը, Ա. Մամյանը, Մ.Անտոնյանը, Ե. Հովհաննիսյանը և քարտուղար Ռ.Խաչատրյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՇՀԾՁԲ-15/9-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **Անուշ Պետրոսյան Ա/Ձ** (ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 5/7)
2. **«Բևեռային ուղի« ՍՊԸ** (Ք. Երևան, Մանանդյան 25շ., բն.6)
3. **«ՍԵԳ» ՍՊԸ** (Ք. Երևան, Սարկավագի փ. 72/2)

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 21.12.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. **Անուշ Պետրոսյան Ա/Ձ**, **<<Բևեռային ուղի>> ՍՊԸ, «ՍԵԳ» ՍՊԸ -ի** կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 **<<Բևեռային ուղի>> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտը / հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 **Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի և «ՍԵԳ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտերում /հայտում առկա փաստաթղթերում/ կան թերություն.

3.2.1 **Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի** հայտի Հավելված 4 հանդիսացող գնային առաջարկում, որպես ընթացակարգի մասնակից գրված է այլ կազմակերպության անվանում:

3.2.2 **«ՍԵԳ» ՍՊԸ-ի** հայտի Հավելված 4 հանդիսացող գնային առաջարկի **1-ին չափաբաժնի** ընդհանուր գնում առկա է հաշվարկային սխալ՝ ինքնարժեք և շահույթ հանրագումարը հավասար չէ ներկայացված ընդհանուր գնին:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	**Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/**			
		Նախահաշվային գին	**Անուշ Պետրոսյան Ա/Ձ***	**<<Բևեռային ուղի>> ՍՊԸ**	**«ՍԵԳ» ՍՊԸ***
1	**Համակարգչային սարքավորումների սպասարկման ծառայություններ**	425800	378700	118800	93700
2	**Լազերային տպիչների և պատճենահանող սարքերի սպասարկման ծառայություններ**	820600	636500	313900	348200

*Հանդիսանում է ԱԱՀ չվճարող

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

6.1 Մերժել Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի հայտը և «ՍԵԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին չափաբաժնի մասով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 44-րդ կետի 4-րդ ենթակետը:

6.2 Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ <<Բևեռային ուղի>> ՍՊԸ-ին:

6.3 Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «ՍԵԳ» ՍՊԸ -ին:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետերի՝ առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ՊԵԿ:

Համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 11:00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Մկրտչյան

_____ Ա. Մամյան

_____ Մ.Անտոնյան

_____ Ե. Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան